ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ղուլարյանի՝ 2019 թվականի նոյեմբերի 17-ից 19-ը Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաք գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Արմեն Ղուլարյան:

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ:

3. Գործուղման վայրը և ժամկետը՝ Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ Պետերբուրգ քաղաք, 2019 թվականի նոյեմբերի 17-ից 19-ը:

4. Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության նախարարություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել «Շինարարության ոլորտի թվային վերափոխումը կայուն զարգացման համար» խորագրով միջազգային համաժողովին:

Համաժողովին մասնակցում էին՝ Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ադրբեջանի, Մոլդովայի հանրապետությունները ներկայացնող բնագավառի ղեկավարներ, ինչպես նաև փորձագետներ և տնտեսվարողներ: Սանկտ Պետերբուրգ էր ժամանել շինարարության ոլորտի թվայնացման լայն շրջանակների մասնագիտական հասարակությունը: Քննարկեցինն BIM տեխնոլոգիաների ներդրման փորձը, դրանց կիրառման առավելությունները կենսագործունեության բոլոր փուլերում՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, շինարարության իրականացման ընթացքում: Տրվեցին գնահատականներ աշխատանքների ժամկետների կրճատման ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Կայացավ նաև շինարարության մեջ BIM տեխնոլոգիաների ոլորտում նորմատիվատեխնիկական բազայի զարգացման հանձնաժողովի ընդլայնված նիստը, որը վարում էր Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության նախարար Վ.Վ. Յակուշևը:

6. Քննարկված թեմաները/հարցերը՝

Քննարկվեց և հաստատվեց շինարարության մեջ BIM տեխնոլոգիաների ոլորտում նորմատիվատեխնիկական բազայի զարգացման հանձնաժողովի կազմը, որի անդամ ընտրվեցի նաև ես:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Մասնակիցների կողմից զեկույցներ և հաղորդումներ ներկայացվեցին հետևյալ հարցերի շուրջ.

- Շինարարության ոլորտի թվային վերափոխումը,
- BIM տեխնոլոգիաների ներդրումը,
- Թվային տեխնոլոգիաների գործարկումը, որպես արդյունավետության բարձրացման իրական գործիք,
- Տեղեկատվության մոդելավորման ծրագրային ապահովման ռուսական շուկան: Զարգացման ուղիները,
- BIM-ը կապիտալ շինարարության ոլորտում,
- Նախագծում,
- Շինարարություն,
- Անշարժ գույքի շահագործում և կառավարում:

Իմ կողմից ներկայացվեց Հայաստանի Հանրապետությունում BIM-ի ընդհանուր նկարագիրը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

BIM տեխնոլոգիաների ոլորտում նորմատիվատեխնիկական բազայի զարգացման հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2020 թվականի փետրվար- մարտ ամիսներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Քննարկումների արդյունքում անհրաժեշտություն առաջացավ BIM տեխնոլոգիաների ոլորտում նորմատիվատեխնիկական բազայի զարգացման հանձնաժողովի հաջորդ նիստին վերանայել նեկայացված դասակարգման համակարգի ներդրման հարցը, ինչպես նաև մշակել իրավական հիմքեր միասնական պորտալի ստեղծման նպատակով:

Միջոցառումն անցավ արդյունավետ և կառուցողական մթնոլորտում՝ ստեղծելով նախադրյալներ և հնարավորություն ԱՊՀ անդամ պետությունների համակողմանի համագործակցություն և փորձի փոխանակում ապահովելու համար:

10. Գործուղվող՝ Արմեն Ղուլարյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը ***21.11.2019 թվական***